ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. 2, 22 mrgashen.kotayq@mta.gov.am

թիվ 471
02 հոկտեմբերի 2020թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ՊԱՐՈՆ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Մրգաշեն համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 30-ին կայացած թիվ 08 արտահերթ նիստի որոշումները թղթային և էլեկտրոնային տարբերակով:

Առդիր 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Շողիկ Ղազարյան
Հեռախոս՝ (093) 63-19-50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքապետարան,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2020 թվականի N 33-Ա

## ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 08 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 08 արտահերթ նիստի օրակարգը.

1. Մրգաշեն համայնքի վարչական տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող Մրգաշեն համայնքի 13-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 12 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.03917հա հողամասը, 8.05քմ պարիսպը և 4.98քմ ջրավազանը ուղղակի վաճառքի միջոցով Մաքսիմ Առաքելյանին օտարելու մասին:
2. Հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ.Ասատրյան | / / | | |
| Զ.Արամյան | / / | | |
| Մ.Խաչատրյան | / / | | |
| Դ. Հակոբյան | / / | | |
| Գ. Մուրադյան | / / | | |
| Դ.Նիկողոսյան | / / | | |
| Մ. Վարդանյան | / / | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշենի համայնքապետարան,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2020 թվականի N 34-Ա

## ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.03917ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ, 8.05ՔՄ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ 4.98ՔՄ ՋՐԱՎԱԶԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՔՍԻՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 -րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24092020-07-0107 վկայականը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին որոշում է՝

1. Մրգաշեն համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող, Մրգաշեն համայնքի 13-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 12 հասցեում գտնվող, բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը 0.03917հա, 8.05քմ պարիսպը և 4.98քմ ջրավազանը /ծածկագիր 07-046-0017-0016/ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Մաքսիմ Առաքելյանին 520369/հինգ հարյուր քսան հազար երեք հարյուր վաթսունինը/ դրամ կադաստրային արժեքով:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ.Ասատրյան | / [signature] / | | |
| Զ.Արամյան | / [signature] / | | |
| Մ.Խաչատրյան | / [signature] / | | |
| Դ. Հակոբյան | / [signature] / | | |
| Գ. Մուրադյան | / [signature] / | | |
| Դ.Նիկողոսյան | / [signature] / | | |
| Մ. Վարդանյան | / [signature] / | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature, stamp] Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22
վարչական շենք mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2020 թվականի N 35-Ա

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի ՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Մրգաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող, սեփականության իրավունքով <<ԿԱՏԱՌԱՆ>> ՍՊԸ-ին պատկանող 07-046-0173-0001 կադաստրային ծածկագրով 1.2417հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խաղողի այգու նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

2. Մրգաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող, սեփականության իրավունքով Վահե Կամոյի Մանուկյանին պատկանող 07-046-0172-0005 կադաստրային ծածկագրով 0.531582հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խաղողի այգու նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

3. Մրգաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող, սեփականության իրավունքով Արմենակ Ավետիքի Այվազյանին պատկանող 07-046-0151-0009 կադաստրային ծածկագրի 2.1113հա մակերեսից 0.3հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Կողմ Դեմ Ձեռնպահ

Մ.Ասատրյան / /
Զ.Արամյան / /
Մ.Խաչատրյան / /
Դ. Հակոբյան / /
Գ. Մուրադյան / /
Դ.Նիկողոսյան / /
Մ. Վարդանյան / /

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ